1902

ԳՐՈՂԻ ԲՈՂՈՔԸ

(Նամակ խմբագրության)

Պ<արոն> Գ. Մելիք-Կարագյոզյանն իր «Իմ պատասխանը Մշակի խմբագրությանը» վերնագրով հոդվածում (Տարազ, № 8) ի միջի այլոց «Մշակի» խմբագրությանն ասում է. «Դուք չե՞ք, որ խեղդել եք ամեն մի նոր (և թե հին) գրական ուժ, եթե այդ ուժը հանդգնում է չհավատալ, որ «Մշակն» է որ կա. դուք չե՞ք, որ տիրելով մամուլին, ոչնչացրել եք քննադատություն, նոր միտք և գրագետների մի ամբողջ սերունդ։

Եթե ձեզ թվում են մեր գանգատները անտեղի, ցույց տվեք գրական ուժեր, որ երևան է հանել «Մշակը» (Ահարոնյանը գուցե միակ)…»։

Ես բողոքում եմ պ. Մելիք-Կարագյոզյանի այս խոսքերի դեմ։ «Գազեթը» երբեք չի կարող գրողների սերունդ ոչնչացնել, ինչպես և չի կարող առաջացնել։ Գրողն ու գրականությունն այնպիսի չնչին երևույթներ չեն, որոնց վրա լրագիրն ունենա ճակատագրական ազդեցություն։

Մի ժամանակ մեր մեջ այդպես էին կարծում։ Մեր խմբագիրներն էլ հրապարակավ պնդում էին, թե իրանք են ստեղծել այս կամ այն գրողին, ինչո՞ւ — որովհետև աշխատակցել է իրանց։ Գրողներին նրանք համարում էին իրանց զինվորներ — իրանց պստլիկ դրոշակի տակ, և եթե մի գրող հեռանար նրանց թերթից, համարվում էր ռենեգատ, դավաճան, փախստական, ենթարկվում էր անվերջ հալածանքի ու հայհոյանքի։

Անվերադառնալի անցան այդ ժամանակները։ Գրողին առաջ բերող ու խեղդող հանգամանքների մեջ «գազեթը» մի շատ ողորմելի բան է։ Իսկական գրողն արհամարհանքով կանցնի դրանց մոտից, և ի՞նչ ունի դրանց հետ։

Սխալ է, զուր պատիվ է, որ անում է պ. Մելիք-Կարագյոզյանը «Մշակին» հավատացնելով, որ նա խեղդել է կամ առաջ է բերել գրողներ։ Եթե նա խեղդելու ուժ ունենար, մեզանում գրողներ չէին լինիլ, իսկ եթե առաջ բերելու կարողություն ունենար—մեր գրողները բոլորովին ուրիշ մարդիկ կլինեին, մարդիկ, որոնց անունները իրանք էլ են մոռացել։

Ինչ վերաբերում է պ. Ահարոնյանին, ես չգիտեմ նրա գրական ծննդաբանությունը, բայց դարձյալ նույն օրենքով ես նրան էլ չեմ համարում «Մշակի» ծնունդ։